ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«01» 03 2022 թ.
№ [illegible]/2-293

«ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ի. Ավագյանին
ՀՀ, ք. Գավառ, Գ. Միքայելյան փ. 69
էլ. հասցեն՝ qnarshin@mail.ru
ՀՎՀՀ 08422096

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 20.04.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-10/12-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակը նշված քանակներով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց 2021թ.		Չմատակարարված քանակ
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.09.2021թ.	
Դարակներով պահարաններ (Բուրգ փայտյա 10 բնիկանի)	հատ	60	30	30	60

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքի չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.03.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՔՆԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 156,850 (մեկ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ և 16,170 (տասնվեց հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ՝ որպես տուգանք, ինչպես նաև տուժանք՝ 323,400 (երեք հարյուր քսաներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որպես պայմանագրի կատարման ապահովում Պայմանագրի գումարի 10%-ը՝ 900005000758 հաշվեհամարին և տուժանք՝ 485,100 (չորս հարյուր ութսունհինգ հազար հարյուր) ՀՀ դրամ, որպես որակավորման ապահովում Պայմանագրի գումարի 15%-ը՝ 900008000664 հաշվեհամարին:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am